

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Հովհաննես Մարգարյանի, Մհեր Շահգեղյանի և Հեղինե Բիշարյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-177-12.12.2012-ՊԻ-010/0) վերաբերյալ:

Համաձայն նախագծին կից ներկայացված հիմնավորման՝ օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում

քաղաքական բազմակարծության, հարցերի ազատ քննարկման և կոլեկտիվ լուծման պահանջն ապահովելու անհրաժեշտությամբ:

Հարկ է նշել, որ «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2008 թվականի հոկտեմբերի 23-ի ՀՕ-182-Ն օրենքի ընդունումը պայմանավորված էր խորհրդարանական ընդդիմության դերի և նշանակության բարձրացման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում օրենսդրական ակտերի քննարկումների ընթացքում բազմակարծության դրսևորման և հարցերի այլընտրանքային լուծումների վերհանման համար լիարժեք պայմանների ապահովման անհրաժեշտությամբ: Նշված օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով գործող օրենքի 26-րդ հոդվածում կատարված լրացմամբ սահմանվել է խմբակցությունների միջև մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների պաշտոններում պատգամավորների կազմից թեկնածուների բաշխման կարգը, որը կատարվում է նույն մասով նշված բանաձևով: Նշված բանաձևի մշակման հիմքում դրված է պրոֆեսոր Վիկտոր դ'Օնդտի (D'Hondt) մեթոդը: Այս մեթոդը լայնորեն օգտագործվում է (այդ թվում՝ համամասնական ընտրակարգով մանդատների բաշխման ժամանակ) մի շարք երկրներում՝ Արգենտինա, Ավստրիա, Բելգիա, Չիլի, Կոլումբիա, Խորվաթիա, Չեխիա, Դանիա, Ֆինլանդիա, Հունգարիա, Իսլանդիա, Իսրայել, Իտալիա, Ճապոնիա, Մակեդոնիա, Հոլանդիա, Լեհաստան, Պորտուգալիա, Ռումինիա, Շոտլանդիա, Սերբիա, Սլովենիա, Իսպանիա, Թուրքիա և այլն: Մեթոդն օգտագործվում է նաև Եվրոպայի խորհրդի տարբեր մարմիններում քաղաքական խմբերի ներկայացվածությունը որոշելիս: Այն հնարավորություն է տալիս ներկայացված բոլոր քաղաքական ուժերին, այդ թվում՝ ընդդիմությանը, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի լիազորությունների ժամկետով՝ հստակ կանոններով միմյանց միջև բաշխել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների

պաշտոնները, ինչը փոքրաթիվ ընդդիմադիր խմբակցությունների համար այդ կարևոր պաշտոններում ներկայացուցիչ ունենալու կայուն երաշխիք է: Մինչդեռ օրենքի նախագծով նախատեսվում է մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների թեկնածուների առաջադրման բանաձևային մեխանիզմը փոխարինել խմբակցությունների միջև ձեռք բերված փոխհամաձայնության մեխանիզմով:

Այդ առումով գտնում ենք, որ մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների թեկնածուների առաջադրման բանաձևային մեխանիզմը հստակ գործակիցներ է սահմանում հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների պաշտոններում պատգամավորների թեկնածուների բաշխման հարցում, ելնելով խմբակցության մանդատների թվից, մինչդեռ օրենքի նախագծով առաջարկվող տարբերակում նման հստակ կարգավորումները փոխարինվում են բանակցային, փոխհամաձայնեցման մեխանիզմով:

Օրենքի նախագծում կարգավորված չեն նաև այն դեպքերը, երբ խմբակցությունները քաղաքական համաձայնության չեն գալիս:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածով սահմանված մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների թեկնածուների առաջադրման մեխանիզմը լիովին ապահովում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներում նախագահների և նրանց տեղակալների պաշտոններում բոլոր խմբակցությունների ներկայացուցիչների ընդգրկվելու հնարավորությունը և դեմ է ներկայացված օրենքի նախագծի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Հրայր Թովմասյանը:

Օրենքի ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման կամ այլ իրավական ակտի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Կից ներկայացվող փաստաթղթերում տրվում է օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատականը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ազգային ժողովի պատգամավորների հեղինակած «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման դեպքում

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումն առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի /այսուհետ՝ նախագիծ/ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաօլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն**,

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից՝ **չեզոք ազդեցություն**:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ազգային Ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Ազգային Ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ *Նախագիծը վերաբերում է մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների պաշտոնների համար թեկնածուների առաջադրման իրավունքին* և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն **չի նախատեսվում:**

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ազգային Ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Ազգային Ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) ընդունումը հնարավորություն կստեղծի ապագա խորհրդարանի բոլոր քաղաքական ուժերին՝ խմբակցություններին, մշտական հանձնաժողովի նախագահների պաշտոններում առաջադրելու իրենց թեկնածուին:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ԱՂԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ օրենք) ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքը բնապահպանության ոլորտին չի առնչվում և այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ՀԱԿԱԿՈՒՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՂԴԵՑՈՒԹՅԱՆ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի ենթակետերով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի
բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ**

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունվելու
կամ չընդունվելու դեպքում, ՀՀ պետական և համայնքների բյուջեների մուտքերի և
ելքերի, ինչպես նաև բյուջետային բնագավառում քաղաքականության փոփոխմանը չի
հանգեցնում:

Պ-177-12.12.2012-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ազգային ժողովի «կանոնակարգ օրենքի 26 հոդվածի 1.1 կետը» ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Օրենքի 26 հոդվածի 1 կետից հանել «սույն հոդվածի 1.1-րդ կետով նախատեսված կարգով» բառերը, իսկ «վերջակետից» հետո լրացնել նոր պարբերություն հետևյալ բովանդակությամբ՝

«Մշտական հանձնաժողովների նախագահների եւ նրանց տեղակալների պաշտոններում պատգամավորների կողմից թեկնածուների առաջադրման իրավունքը խմբակցությունների միջեւ փոխհամաձայնությամբ բաշխվում է այնպես, որ յուրաքանչյուր խմբակցության համար առնվազն ապահովվի մեկ հանձնաժողովի նախագահի եւ մեկ տեղակալի պաշտոն»:

Հոդված 3. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում հաջորդ (6-րդ) գումարման Ազգային ժողովի առաջին նիստի օրվանից:

Հիմնավորում

«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Համաձայն Ազգային ժողովի կանոնակարգ օրենքի 2-րդ հոդվածի՝ Ազգային ժողովի մարմիններն են Ազգային ժողովի նախագահը, նրա տեղակալները, պատգամավորները եւ հանձնաժողովները: Ազգային ժողովի կանոնակարգ օրենքում իրականացված փոփոխությունները, համաձայն որոնց մշտական հանձնաժողովների նախագահների եւ նրանց տեղակալների պաշտոններում պատգամավորների կողմից թեկնածուների առաջադրման իրավունքը խմբակցությունների միջեւ բաշխվում է ըստ բանաձեւի եւ կախված է խմբակցության պատգամավորների թվից: 5-րդ գումարման Ազգային ժողովի 6 խմբակցություններից 4-ը նշված բանաձեւի կիրառման արդյունքում զրկվեցին մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունքից: Փաստորեն, վերը նշվածի հետեւանքով մի շարք խմբակցություններ հնարավորություն չունեցան Ազգային ժողովի մարմիններից՝ հանձնաժողովներից, գոնե մեկում ունենալ հանձնաժողովի նախագահի պաշտոն: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Ազգային ժողովը գործում է ըստ ՀՀ Սահմանադրությամբ սահմանված լիազորությունների, եւ որպես օրենսդիր իշխանությունն իրականացնող մարմին ԱԺ գործունեությունը հիմնվում է քաղաքական բազմակարծության, հարցերի ազատ քննարկման եւ կոլեկտիվ լուծման սկզբունքների վրա, ուստի հանձնաժողովների նախագահների պաշտոնում թեկնածուների առաջադրման իրավունք պետք է ունենան բոլոր խմբակցությունները, որպեսզի իրականացվի վերոգրյալ երեք կարեւորագույն սկզբունքները: Ուսումնասիրելով եվրոպական եւ ԱՊՀ երկրների փորձը՝ չենք հանդիպել մի երկրի, որտեղ Օրենսդիր մարմնում խմբակցությունների մի մասը Օրենքով սահմանված կարգով զրկված լինեն տարբեր պաշտոններում թեկնածուներ

առաջադրելու իրավունքից, ավելին, Ռուսաստանի Դաշնությունում պառլամենտի փոխխոսնակների թիվը հավասար է խմբակցությունների թվին, այսինքն՝ բոլոր խմբակցությունները ունեն փոխխոսնակի պաշտոն:

Ներկայացված նախագծի ընդունումը հնարավորություն կստեղծի ապագա խորհրդարանի բոլոր քաղաքական ուժերին՝ խմբակցություններին, մշտական հանձնաժողովի նախագահների պաշտոններում առաջադրելու իրենց թեկնածուին: Ավելին՝ բոլոր խմբակցությունները, անկախ նրանից փոքրամասնություն են, թե մեծամասնություն, կարող են ունենալ նվազագույնը մեկ նախագահի եւ տեղակալի պաշտոն հանձնաժողովներից որեւէ մեկում: